2. Սույն որոշման ուղևորված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


26 հունիսի 2015 թվականի N Մ- 655 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 15-Ի N Մ-453-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱՐԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 24-ի N 07/80-2/16510-15 և հունիսի 24-ի N 06/3-3/16451-15 եզրակացությունները ու հաշվի առնելով «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 2015 թվականի հունիսի 12-ի N 15/79 գրությունը, **ո թ ո**
2 ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի N Մ-803-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ)» N Մ-453-Ա որոշման 1-ին կետում «1,000,000 դրամ» բառերը փոխարինել «2,000,000 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 հունիսի 2015 թվականի N Մ - 656 - Ա
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐՂԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՂՐՈՆԻ ՆԵՐԿՐՈՒՄ և ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի հունիսի 19-ի համաձայնեցման թերթը, որոշում է:

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 3,157,991,250 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար գուղրոնի ներկրում և վերամշակում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Մերիան Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01564498) 2015 թվականի հունիսի 18-ին կնքված N Բ-01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գուղրոնի վերամշակման և փոխադրման աշխատանքների իրականացում՝ 711,660,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով կատարվող աշխատանքները, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կատարվող աշխատանքները, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից կատարվող աշխատանքները, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից կատարվող աշխատանքները:



ՆԱԽ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Տ Ա Ս Վ Վ Ս Ե

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործարքի տնօրեն
Սիրա Վարդանյան

«18» հունիսի 2015թ.



«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար գուղրոնի ներկրում և վերամշակում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը կարող ռազմավարական նշանակության ավտոճանապարհի կառուցման համար գուղրոնի ներկրում և վերամշակում և փոխադրում ստացում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ /Ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ քննադատողը	Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Ճանապարհաշինության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 3.157.991.250,00 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

8. Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հունիսի 18-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31ը:
9. Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2015թ հունիսի 18-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 31ը -15.625 տոննա գուդրոնի ներկրում (մեկ տոննայի արժեքը՝ 156.565,20 դրամ) 2.446.331.250,00 ՀՀ դրամ -գուդրոնի վերամշակում, բիտումի ստացում, փոխադրում և հանձնում 711.660.000,00 ՀՀ դրամ
10 Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	«Մերիան Գրուպ» ՍՊԸ-ի միջոցով Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար «Հայաստան Համահայկական Հիմնադրամ»-ի հասցեով 15.625 տոննա գուդրոնի ներկրում (մեկ տոննայի արժեքը՝ 156.565,20 դրամ) 2.446.331.250,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի «Մերիան Գրուպ» ՍՊԸ –ի կողմից գուդրոնի վերամշակում, բիտումի ստացում, փոխադրում և հանձնում 711.660.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի
11 Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12 Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ
13 Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է համակարգի արդյունավետության բարեգործական ծրագրերի համակարգում հանձնաժողովի կողմից (եւ նախկին ծրագրերի ավարտվածություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝ Արմինա Դարբինյանը





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 հունիսի 2015 թվականի N Մ - 657 - Ա
քաղ. երևան


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ - 442 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 5-ի N 3/3.8-2/14389-15 և 9-ի N 06/5-1/14636-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (2073 տեղ, 24,574 կգ ընդհանուր քաշով, 304,731 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 4,250 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» Տ/Մ ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական անվտանգության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Գրասենյակի կազմակերպության Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզային կենտրոններին:

ՆԱԽԱԳ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

2073 տեղ 62190 կգ	24574	22091	304731
----------------------	-------	-------	--------

Իրոք ստացված ապրանքների քանակը և արժեքը պետք է համընդհանուր լինի ներդրված քանակի և արժեքի հետ: Այլ կարևոր տեղեկությունները կհաղորդվեն հետագայում:

Մեծ քանակությամբ ապրանքների և արժեքների համընդհանրությունը կապահովվի:

Մեծ քանակությամբ ապրանքների և արժեքների համընդհանրությունը կապահովվի:

Մեծ քանակությամբ ապրանքների և արժեքների համընդհանրությունը կապահովվի:



05.1/8.15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-658-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 11-ի N 07/80-2/14904-15 և հունիսի 16-ի N 06/18-4/15486-15 եզրակացու-
թյունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված
բնական քարերից շինարարական մանրամասները (16 տեղ, 10,980 կգ ընդհանուր քաշով,
60,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են
3,183,000 դրամ, «ՄՃՓ» ՏՍ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետր-
վարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին
հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաս-
տատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և
2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջա-
նակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն:

ՆԱԽԱՐԱՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 հունիսի 2015 թվականի N Մ-659-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 16-ի N 07/80-2/15512-15 և հունիսի 17-ի N 06/18-4/15719-15 եզրակացու-
թյունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված օդա-
փոխության համակարգի սարքավորումները (2 տեղ, 7,230 կգ ընդհանուր քաշով, 122,000
եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը,
«ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-
կան ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր»
բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհա-
րանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանք-
ների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի
փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի
20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-660-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 17-ի N 07/80-2/15688-15 և հունիսի 18-ի N 06/18-4/15819-15 եզրակա-
ցությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված օդա-
փոխության համակարգի մանրամասները և յուրը (5 տեղ, 62 կգ ընդհանուր քաշով, 600
եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը,
«Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-
գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի
«Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիած-
նի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխա-
տանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվա-
կանի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի
փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

Արտագրված

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 հունիսի 2015 թվականի N Մ-661-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 16-ի N 07/80-2/15547-15 և հունիսի 18-ի N 06/3-3/15821-15 եզրակացու-
թյունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսու-թյունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականա-ցում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մարմարի աշխարհ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00808678) 2015 թվականի հունիսի 5-ին կնքված՝ N 04/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 42.47 քառ. մետր մարմարե սալիկների մատակարարում՝ 3,471,878 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն:

ՆԱԽԱԳԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-662-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿ-
ՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-867-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 17-ի N 07/80-2/15686-15 և հունիսի 18-ի N 06/3-3/15812-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-867-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-681-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2009 թվականի փետրվարի 17-ին կնքված՝ N 10498564 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ ամսական 90,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԸ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-663-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 12-ի N 07/80-2/15121-15 և հունիսի 11-ի N 06/3-3/14884-15 եզրակացու-
թյունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-
դրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«Ակթերեյ-ԱՌՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02622926) 2015 թվականի հունիսի 1-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հատուկ տպիչի
ձեռքբերում՝ 166,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումով որոշվելի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-664-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 16-ի N 07/80-2/15416-15 և հունիսի 17-ի N 06/3-3/15632-15 եզրակացու-
թյունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-
դրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին»
N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի քաղաքացի Ժակլին Աբրամյանի հետ (անձնագիր՝ 218875587) 2015 թվա-
կանի մայիսի 15-ին կնքված՝ N 01-15.05.15 պայմանագրում նշված գործարքը, որով նախա-
տեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված
783,892 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշման հիմքով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳԱՆ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-665-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 16-ի N 07/80-2/15418-15 և հունիսի 17-ի N 06/3-3/15629-15 եզրակացու-
թյունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի
կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրա-
գրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա
համար ունի զգալի նշանակություն՝

«Պիկ լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2015 թվականի մայիսի 26-ին
կնքված՝ N 05/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռուստացույցի
երկաթյե կախիչի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 150,000 դրամի չափով,
առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳԱԾ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-666-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 16-ի N 07/80-2/15414-15 և հունիսի 17-ի N 06/3-3/15626-15 եզրակացու-
թյունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի
կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրա-
գրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա
համար ունի զգալի նշանակություն՝

«ՋիէնՍի-Ալֆա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00096001) 2015 թվականի մայիսի 22-ին
կնքված՝ N C0746 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի
հունիսի 1-ից մինչև 2016 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում համա-
ցանցի և տվյալների փոխանցման ծառայությունների մատուցում՝ ամսական 250,000 դրամի
չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Այն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-667-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-664-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 17-ի N 07/80-2/15689-15 և հունիսի 18-ի N 06/3-3/15822-15 եզրակացու-
թյունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց
միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված
գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրակա-
նացվող «Վանաձորի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահա-
վորում» ծրագրի մասին» N Մ-664-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ
և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ար և Ար դիզայն քնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01547716) 2015 թվականի
ապրիլի 28-ին կնքված՝ N 280415-05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում
է ջեռուցման և օդափոխության համակարգերի ու կաթսայատան նախագծման, սարքա-
վորումների մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 15,992,099
դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն:

ՆԱԽԱԳԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-668-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 10-ի N 07/80-2/14821-15 և հունիսի 15-ի N 06/3-3/15175-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-1041-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի մարտի 13-ի N Մ-222-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պիկ լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2015 թվականի հունիսի 2-ին կնքված՝ N 2015/NKR/04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սեղանների համար մետաղական տակդիրների պատրաստման աշխատանքների իրականացում՝ 1,140,000 ՀՀԴրամով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱՐԱՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 հունիսի 2015 թվականի N Մ-669-Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-209-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն**

(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հաշվի առնելով «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի 2015 թվականի
հունիսի 15-ի N 20 գրությունը, որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-867-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-209-Ա որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետում «մինչև դեկտեմբերի 31-ն» բառերը փոխարինել «մինչև հունիսի 30-ն» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԸ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-670-Ա
քաղ. երևան

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 16-ի N 07/80-2/15513-15 և հունիսի 15-ի N 06/3-3/15373-15 Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2015 թվականի հունիսի 25-ի N ՊՄ/510-1031 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի քաղաքացիներ Վարդգես և Մերի Նաջարյանների կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Զինվորական բժիշկների հայկական ասոցիացիա» առողջապահական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված «Ֆորդ» մակնիշի շտապ օգնության ավտոմեքենայի (2002 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ 1FDXE45F42HB77168, 32,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 11,000 ԱՄՆ-ի դոլար) ներմուծման և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության անհատույց հանձնման ծրագիրը:

2. «Զինվորական բժիշկների հայկական ասոցիացիա» առողջապահական հասարակական կազմակերպությանը՝ նշված ավտոմեքենայի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 հունիսի 2015 թվականի N Մ-671-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՈՒԵՅՐՈՒՄ ԳԵՂԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶ-
ՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 25-ի N 07/80-2/16631-15 և հունիսի 26-ի N 06/18-4/16744-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի հունիսի 25-ի N 1/06/822-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել եվրոպայի վոլեյբոլի կոնֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (6 տեղ, 81 կգ ընդհանուր քաշով, 347 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 157,628 ճապոնական իեն, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-672-Ա
քաղ. երևան


«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴՐՈՒՄ ԳԵՂԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶ-
ՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 23-ի N 07/80-2/16294-15 և հունիսի 23-ի N 06/5-1/16281-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի հունիսի 19-ի N 1/06/796-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Միջազգային հանդրույի ֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի հանդրույի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզահագուստի (5 տեղ, 57 կգ ընդհանուր քաշով, 928 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 302.67 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հանդրույի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-673-Ա
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴՐՈՒ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶ-
ՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 23-ի N 07/80-2/16293-15 և հունիսի 23-ի N 06/5-1/16277-15 ու
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015
թվականի հունիսի 19-ի N 1/06/797-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Միջազգային հանդբոլի ֆեդերացիայի կողմից, որպես
օժանդակություն, «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպու-
թյան հասցեով ուղարկված մարզահագուստի (4 տեղ, 40 կգ ընդհանուր քաշով, 936 եվրոյին
համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 214.40 եվրո, «ՄՓ և
ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝
նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկե-
տում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-
կան ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարություն:

ՆԱԽԱՐԱՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-674-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 3
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 24-ի N 07/80-2/16456-15 և հունիսի 24-ի N 06/5-1/16449-15 եզրակացու-
թյունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված օդա-
փոխության համակարգի ջերմակիր հեղուկը (15 տեղ, 3,030 կգ ընդհանուր քաշով,
467,123.13 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը
կազմել են 30,000 ռուսական ռուբլի, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հան-
րապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողո-
վի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրակա-
նացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի
արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին»
N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմ-
բերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբա-
գրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-675-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 4
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 24-ի N 07/80-2/16453-15 և հունիսի 23-ի N 06/18-4/16264-15 եզրակա-
ցությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված
հրդեհաշիջման ճկուն խողովակները (53 տեղ, 454.20 կգ ընդհանուր քաշով, 98,981.21
ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են
10,000 ռուսական ռուբլի, «Գուգարքի» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվա-
կանի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող
«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և
ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա
որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի
N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ)
ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումով նախատեսված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 հունիսի 2015 թվականի N Մ-676-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 24-ի N 07/80-2/16455-15 և հունիսի 25-ի N 06/18-4/16529-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված քարթիջները և թղթերը (7 տեղ, 67 կգ ընդհանուր քաշով, 2,233.78 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 614.66 ԱՄՆ-ի դոլար, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 հունիսի 2015 թվականի N Մ-677-Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N Մ-719-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 24-ի N 07/80-2/16507-15 և հունիսի 25-ի N 06/3-3/16526-15 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-719-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-846-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Եվրոփոլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00463174) 2015 թվականի հունիսի 17-ին կնքված՝ N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 65 քառ. մետր ապակյա շերտամիջնորմների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 11,001,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումով կնքված պայմանագրով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽՆԵՆՈՒՄ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2015 թվականի N Մ-678-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 24-ի N 07/80-2/16506-15 և հունիսի 26-ի N 06/3-3/16532-15 եզրակա-
ցությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-
դրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

Իսպանիայի քաղաքացի Ժոզե Մարիա Ֆարգաս Տեքսիդոյի հետ (անձնագիր՝
AAD605809) 2015 թվականի մայիսի 14-ին կնքված՝ N 01-14.05.15 պայմանագրում նշված
գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների
մատուցում՝ գնահատված 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 հունիսի 2015 թվականի N Մ-679-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N Մ-146-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի հունիսի 12-ի N 07/80-2/15126-15 և հունիսի 10-ի N 06/3-3/14813-15 եզրակացու-
թյունները, որ ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 25-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-դրամի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի հին թատրոնի շենքի ուսումնասիրում» ծրագրի մասին» N Մ-146-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Ամերիկյան TTG ընկերության հետ (300 N. Lake Avenue, 14th Floor, Pasadena, CA 91101) 2015 թվականի մայիսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սեյսմիկ ուսումնասիրման ծառայությունների մատուցում՝ 18,350 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն:

Ն Ա

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 հունիսի 2015 թվականի N Մ-680-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ
ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 10-ի N 07/80-2/14820-15 և հունիսի 8-ի N 06/3-3/14429-15 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թունո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «126,000,000 դրամ» բառերը փոխարինել «150,380,000 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պիկ լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2015 թվականի ապրիլի 20-ին կնքված՝ N 04/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սեղանների մետաղական տակդիրների պատրաստման աշխատանքների իրականացում՝ 1,140,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ախուրյանի կոոպչին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05801184) 2015 թվականի ապրիլի 28-ին կնքված՝ N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 15,385,196 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Էլլիպս ՋիԷյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2015 թվականի մայիսի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է եռաձող պտտադոնակի ձեռքբերում՝ 380,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:






Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


Թ Ո Ւ Մ Ո Ս Տ Ե Ղ Ծ Ա Ր Ա Ր Տ Ե Ն Ն Ո Լ Ո Գ Ի Ա Ն Ե Ր Ի Կ Ե Ն Տ Ր Ո Ն - Գ Յ Ո Ւ Մ Ր Ի Ծ Ր Ա Գ Ի Ր


1. Ծրագրի նպատակը	<ul style="list-style-type: none"> Աջակցել կրտսեր խմբի (12-18 տարեկան) ՀՀ երիտասարդներին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերել ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում, Առանձին դասընթացների միջոցով աջակցել կրտսեր խմբի երիտասարդներին զարգացնելու իրենց տեխնոլոգիական գիտելիքները կոնկրետ ուղղություններով, Առանձին նպատակատրված դասընթացների միջոցով աջակցել ավագ խմբի (19-26 տարեկան) ՀՀ երիտասարդներին իրենց մասնագիտական գիտելիքների ընդլայնմանը կոնկրետ ուղղություններով, Խրախուսել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին ստեղծել շփումներ իրենց հասակակից օտարերկրյա երիտասարդների, մասնագետների և արհեստավարժների հետ, Աջակցել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին իրենց մասնագիտական տեսական գիտելիքները օգտագործել պրակտիկ, գործարար դաշտում՝ այսպիսով օժանդակելով նոր աշխատատեղերի և գործարար հարաբերությունների ստեղծմանը
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3. Բարեգործը	Բարեգործները տարբեր ֆիզիկական անձինք են, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք կազմակերպված և դեռ ընթացքի մեջ գտնվող դրամահավաքի միջոցով կատարում են իրենց հանգանակությունները:

4. Ծրագիրը կատարողը	Սիմոնյան կրթական հիմնադրամ, հասցե՝ ք.Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ 01245672:
5. Ծրագրի իրականացման վայրը	Ծրագիրը իրականացվելու է Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի, Գեղամուկյանի շենքում՝ ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում:
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմելու է 150 380 000 (մեկ հարյուր հիսուն միլիոն ք հարյուր ութսուն հազար) դրամ:
